



Ե Ր Կ Շ Ա Բ Ա Թ Ա Թ Ե Ր Թ

ՀՀ Դաշնակցության Արցախի Կենտրոնական Կոմիտեի պաշտոնաթերթ

Մենք համացանցում

www.aparaj.am

## Խմբագրական

### Ճանաչումից հատուցում անցնելն անխուսափելի է

Օրեր առաջ ԱՄՆ Սենատի արտաքին հարաբերությունների հանձնաժողովը ընդունել է Հայոց ցեղասպանության փաստը դատապարտող բանաձև:

Վերջին 25 տարիներին սա առաջին դեպքն է, որ Սենատում նման փաստաթուղթ է ընդունվում:

Այս փաստը, բնականաբար, դրական արձագանքներ է ստացել հայկական աշխարհում, եւ սպասելի արձագանք՝ Թուրքիայից: Թուրքական կողմի տարատեսակ հայտարարությունների շարքում ուշագրավն այն էր, որ Թուրքիայի Արտաքին գործերի նախարարը հայտարարել է, որ ԱՄՆ Սենատի օրակարգում Հայոց ցեղասպանության հարցը չի ընդգրկվի: Ըստ թուրք նախարարի՝ այս մասին նրան հեռախոսազրույցի ժամանակը հայտնել է ԱՄՆ պետքարտուղար Ջոն Զեքին: Դատելով այն եզրակացությունից, որ ամերիկյան կողմը չի հերքել թուրք նախարարի հայտարարությունը, պարզ է դառնում, որ ԱՄՆ սենատում կամ պարզապես հերթական անգամ սիրաշահում են հայերին՝ այդ կերպ կանխելով Հայոց ցեղասպանության 100-ամյակի շեմին հայկական կողմի քարոզչական եւ ազգային հնարավոր ակտիվացումը, կամ՝ ամերիկյան սառնասիրտ քաղաքականությանը հատուկ՝ Հայոց ցեղասպանության թեման հերթական անգամ առեւտրի առարկա է դառնում ԱՄՆ-Թուրքիա փոխհարաբերություններում:

Չավեշտավի այն է, որ Թուրքիայի կառավարության անդամը նախօրոք հայտարարում է, թե ինչ է անելու կամ ինչ պետք է անի ԱՄՆ Սենատը:

Հայկական կողմը պետք է այլեւս չընդունի եւ չհանդուրժի ցեղասպանության հարցի շահարկումը ամենատարբեր առիթներով ու ամենատարբեր մակարդակներում:

Եթե ԱՄՆ Սենատի օրակարգում չընդգրկվի Հայոց ցեղասպանության հարցը, պարզ կդառնա, որ թուրք-ամերիկյան առեւտուրը վերացական չէ, եւ սրա մասին առանց կաշկանդվելու ցինիկաբար հայտարարել է թուրք նախարարը:

Պարզ է, որ Թուրքիան ամեն ինչ անելու է, որպեսզի պատրաստ լինի հակադարձելու Հայոց ցեղասպանության 100-ամյակին սվիդած հայկական կողմի լայնամասշտաբ ձեռնարկներին:

Եղբայրական թուրքիային աջակություն ցուցաբերելու համար այս ուղղությամբ հանձնարարակներ է ստացել եւ արտաքին աշխարհում իր աշխատանքներն է սկսել քարոզչական կեղծարարությամբ փայլող Ադրբեջանը, ինչի մասին վերջերս պարզ է դարձել Թուրքիայում կայացած Գյուլ-Ալիե հանդիպման ժամանակ:

Հայոց ցեղասպանության 100-ամյա շեմը լուրջ անհանգստացում է Թուրքիային՝ ոչ միայն այն պատճառով, որ աշխարհի տարբեր ծայրերում նախատեսվում են ցեղասպանության գոհերի ոգեկոչման եւ դատապարտող բնույթի ձեռնարկներ, որոնք շատ լուրջ համաշխարհային մակարդակով ազդելու են Թուրքիայի իմիջին, այլեւ, որ հայկական կողմը սկսել է շատ հստակորեն խոսել պահանջատիրության մասին եւ հայտարարել, որ 100-րդ տարելիցով սկսելու է պահանջատիրության եւ Հայ Դատի ժամանակաշրջանը:

Անկախ աշխարհի գերտերությունների մոտեցումներից ու մանեւրներից՝ հայ ժողովրդի համար ցեղասպանության ճանաչումից անցումը հատուցումի՝ անխուսափելի է:



## Տարիները մոռացության չեն մատնում Արթուր Սկրտչյանի կերպարը

22 տարի առաջ ապրիլի 14-ին Լեռնային Ղարաբաղի Գերագույն Խորհրդի առաջին նախագահ Արթուր Սկրտչյանի մահվան բոթը ցնցեց հայ ժողովրդին: Ամեն տարի Արթուր Սկրտչյանի ծննդյան եւ մահվան օրերին մարդաշատ է լինում Ստեփանակերտի հուշահամալիրը, որտեղ ամփոփված է Արթուր Սկրտչյանի մարմինը:

Այսօր Արթուր Սկրտչյանի անմար հիշատակը հարգելու համար նրա շիրիմին ծաղիկներ դրեցին ու հարգանքի տուրք մատուցեցին ԼՂՀ ԱԺ նախագահը, ՀՀ Կրթության ԿԿ ներկայացուցիչը, ԱԺ պատգամավորներ, կուսակցական ընկերներ, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ եւ Արթուր Սկրտչյանի հարազատները:

Օժտված լինելով մարդկային բարձր հատկանիշներով՝ Արթուր Սկրտչյանը Արցախյան շարժման հորձանուտում հայտնվեց որպես հանրության կողմից ընդունելի դեմք ու կազմակերպիչ, իսկ հետագայում նա դարձավ ազգային խորհրդանիշ: Արթուր Սկրտչյանն Արցախյան շարժման այն առաջամարտիկներից էր, ով խորապես տիրապետում էր ազգային արժեքներին եւ ում համար ի վերուստ պարզ էր, որ մեր ժողովրդի գոյատևման խնդիրն անիրագործելի է առանց նրա հավաքական ուժի եւ պայքարի:

«Մեզ համար Արթուր Սկրտչյանի շիրիմին այցելությունները դարձել են ավանդական, եւ տարին մի քանի անգամ մենք մեր զինակիցներին, Արցախյան շարժման առաջին սերնդի մեր առաջնորդներին հիշելու հնարավորություններ ունենում ենք»,- նշեց ԼՂՀ ԱԺ նախագահ Ա. Ղուլյանը եւ հավելեց,- Արթուր Սկրտչյանը պատկանում է այն սերնդին, որը բարեբախտություն է ունեցել ամենակտիվ մասնակցությունը բերել մեր ազգային ազատագրական պայքարին: Եվ թերեւս նրա գործունեությունը, որպես սկիզբ, որպես խորհրդարանական աշ-

խատանքային տարեգրության մեկնարկ, այսօր էլ մեզ օգնում է, որպեսզի մենք մեր ճանապարհը շիտակ կառուցենք»:

Արցախի ԿԿ ներկայացուցիչ Դավիթ Իշխանյանը, խոսելով Արթուր Սկրտչյանի մասին՝ որպես կուսակցական ընկերոջ եւ որպես քաղաքական գործչի, նշեց, որ տարիներն Արթուրի կերպարը մոռացության մատնելու փոխարեն ավելի հստակ են դարձնում. «Տարիների վաղեմությունը կարծես թե ինչ-որ բան պետք է մոռացության տա, բայց Արթուր Սկրտչյանի պարագայում մենք ունենք հակառակ պատկերը: Մենք տարեցտարի ավելի ենք զգում եւ ավելի ենք գիտակցում Արթուր Սկրտչյանի կերպարը՝ ոչ միայն որպես պետական գործիչ, ոչ միայն կուսակցական գործիչ, այլ առհասարակ նրա կերպարի անհրաժեշտություն ենք զգում: Իր թողած ամենամեծ դասերը մեզ համար դառնում են ավելի ուսանելի»:

Արցախի ԿԿ ներկայացուցիչը խոսեց նաեւ Արթուրի սկսած գործի շարունակման մասին. «Տավոք, բայց պետք է ասեմ, որ կան բավականին բացթողումներ, եւ այն, ինչ երազում էր, այն հիմքը, որ դրել է Արթուր Սկրտչյանը, դժբախտաբար որոշակի շեղումների ընթացք է ստացել, սակայն եւ լինույս են, որ մեր ժողովուրդը եւ մեր սերունդը այդ հիմքը կարող է արդյունավետ հասցնել իր վերջնագծին»:

Արթուր Սկրտչյանի եղբայրը՝ Ղարիբ Բադալյանը, դժվարությամբ էր զգասում արցունքները, երբ խոսում էր եղբոր մասին. «Արթուրի մահից անցել է 22 տարի, սակայն ամեն անգամ Արթուրի շիրիմին այցելելիս նույն ցավն ու նույն տառապանքն են զգում, քանզի նա այլ հոգեբանության տեր մարդ է եղել: Կարծում եմ՝ Աստուծո գործերից է եղել, որ այսքան ազնիվ մարդը այդքան արդարացի պայքարի արդյունքում ընտրվել է ԳԽ առաջին նախա-

գահ: Արթուրը ոչ միայն մեր նորաստեղծ հանրապետության խորհրդանիշն է դարձել, այլ նաեւ արդարության շիտակության, մաքրության խորհրդանիշը: Եվ պատահական չէ, որ այսօր նրա անվան դպրոց է գործում, որի սաները կշարունակեն Արթուրի գործը, քանզի Արթուրի գործն անմահ է: Նա միայնակ չի կերտել մեր երկրի ապագան: Գլուխ եմ խոնարհում բոլոր նրանց համար, ովքեր իրենց կյանքը դրեցին հայրենիքի փրկության գոհասեղանին»:

ԼՂՀ Գերագույն Խորհրդի առաջին նախագահ Արթուր Սկրտչյանը երկրորդ հայկական պետությունը ղեկավարել է ընդամենը 97 օր, սակայն նրա անձը, կյանքի ուղին եւ ճակատագիրն այնպիսի անջնջելի հետք են թողել հայ ժողովրդի նորագույն պատմության մեջ, որ անգամ պաշտոնավարած լինելով երեք ամսից քիչ ժամանակահատվածում, նրա անունն առիավետ մտում է ժողովրդի հիշողության մեջ: Իսկ ճակատագրի ողբերգականությունը դարձավ այս բոլոր տարիների ընթացքում ամենաբարդ, թերեւս ամենաճանր ժամանակաշրջանի ողբերգականության խորհրդանիշը:

Լեռնային Ղարաբաղի Գերագույն Խորհրդի առաջին նախագահ Արթուր Սկրտչյանն այն քաղաքական գործիչներից էր, ում մասին ասում են՝ նա բարոյականություն էր քաղաքականության մեջ: Որքան էլ ասված խոսքերը պարադոքսային թվան առաջին հայացքից, սակայն Արթուր Սկրտչյանին քաջածանոթ մարդիկ հաստատում են այդ խոսքերը: Արցախյան պայքարի գործընթացի ամենակարեւոր հարցը կամ գործոնը մաքրությունն էր, գաղափարի նախապատվությունը ամեն տեսակ նպատակներից: Դեկավարի կերպարը, նկարագիրը պետք է բարոյական լինի:

«ԱՊՄԱՍԺ»

### ԱՄՆ Սենատում հավանության արժանացավ Հայոց ցեղասպանության մասին բանաձեռը

Ապրիլի 10-ին ԱՄՆ Սենատի արտաքին հարաբերությունների հանձնաժողովը ընդունել է Հայոց ցեղասպանության փաստը դատապարտող բանաձեռ:

Վերջին 25 տարիներին սա առաջին դեպքն է, որ Սենատում նման փաստաթուղթ է ընդունվում: Բանաձեռին կողմ են քվեարկել 12 սենատոր, իսկ 5 սենատոր դեմ են քվեարկել:

Սենատի արտաքին հարաբերությունների հանձնախմբի նախագահ Ռոբերտ Մենենդեսի եւ սենատոր Մարկ Բլրոքի՝ ապրիլի 3-ին շրջանառության դրված նախագիծը Միացյալ Նահանգների նախագահին կոչ է անում ջանքեր գործադրել հայ-թուրքական կայուն, կառուցողական հարաբերությունների հաստատման համար, բայց որոնք հիմնված կլինեն Հայոց ցեղասպանության փաստերի եւ հետեւանքների՝ Թուրքիայի կողմից ամբողջովին ճանաչման վրա:

Ապրիլի 9-ի երեկոյան ԱՄՆ Սենատի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահ Ռոբերտ Մենենդեսը հայտարարել է. «Ինձ համար եւ բոլոր բարիացական մարդկանց համար մի պարզ բան կա. Ցեղասպանությունը ցեղասպանություն է, եւ դուք չեք կարող դա անվանել ուրիշ ձեւ, բայց անհրաժեշտ է, որ դուք դա ճանաչեք: Հաջորդ տարի, երբ մենք նշում ենք մեկ դարը, երբ հարյուր տարի առաջ հայերը սպանվեցին Օսմանյան կայսրության կողմից, ինձ թվում էր, որ այն վերապրածները բոլորն այլեւս չկան, բայց



Քերիի հետ հարցազրույցի ժամանակ ասել էր. «Ապրիլի 24-ի նախօրեին լոբբիստները սկսում են ակտիվանալ, ինչն անհանգստություն է պատճառում Թուրքիային: Հնարավոր է լարվածություն առաջանա: Ակնկալում ենք, որ ԱՄՆ դեկլարությունը մեզ ներդրության մեջ գրող վերաբերմունք չի ցուցաբերի»:

ԱՄՆ Սենատում Հայոց ցեղասպանությանը վերաբերող բանաձեռի ընդունումն, ինչպես եւ սպասվում էր, գայրացրել է Թուրքիային, ինչի կապակցությամբ էլ

մեկնաբանություն է տվել ԱՄՆ-ում գտնվող Թուրքիայի փոխվարչապետ Ալի Բաբաջանը:

Թուրքական «Յուրիթ» պարբերականը գրում է, որ Վաշինգտոնում Հայոց ցեղասպանության բանաձեռի ընդունման վերաբերյալ հարցին ի պատասխան՝ Բաբաջանը հայտնել է, որ հարցը քննարկվում է Անկարայում եւ այս կապակցությամբ կառավարությունը հանդես կգա պաշտոնական հայտարարությամբ: Ըստ Բաբաջանի՝ ԱՄՆ-ում՝ որպես ներքին քաղաքական կյանք է օգտագործվում այն թեման, որը պնդում է, թե ինչ է տեղի ունեցել 99 տարի առաջ ԱՄՆ-ից այդքան հեռու գտնվող տարածքում, սակայն դրա վերաբերյալ չեն արվել գիտական հետազոտություններ, եւ որը կտրականապես մերժվում է թուրքական կողմից:

Անդրադառնալով այն հարցին, թե արդյոք այս անգամ էլ ԱՄՆ-ում Թուրքիայի դեսպանը կարող է հետ կանչվել, Բաբաջանը հիշեցրել է, որ հարցը քննարկվում է պաշտոնական Անկարայի կողմից:

Խոսելով թուրք-ամերիկյան հարաբերությունների մասին, Թուրքիայի փոխվարչապետը ճիշտ չի համարել այս պահին դրան գնահատական տալ:

Վ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

### Միսիսիպի նահանգը նույնպես մերժեց ադրբեջանամետ բանաձեռը

Միսիսիպի նահանգի Սենատն ապրիլի 9-ին մերժեց ադրբեջանամետ հերթական բանաձեռը: Բանաձեռն արգելափակվել է արտաքին հարաբերությունների հանձնաժողովում եւ չի դրվել քվեարկության:

«Ադրբեջանի տարածքային ամբողջականության» մասին բանաձեռը ներկայացրել էր սենատոր Ջոն Հորնը, որտեղ ասվում էր, որ Ադրբեջանը Միացյալ Նահանգների համար կարելի է գործընկեր է, մասնավորապես՝ Միսիսիպի նահանգի համար, եւ կոչ է արվում պաշտոնական Վաշինգտոնին՝ աջակցել Ադրբեջանի եւ ԱՄՆ-ի միջեւ ստրատեգիական համագործակցությունը ու ջանքեր գործադրել Լեռնային Ղարաբաղի շարունակվող հակամարտության լուծման համար՝ ճանաչելով Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը:

Վերջերս ադրբեջանական քարոզամեքենան ինտենսիվ քայլեր է ձեռնարկում ԱՄՆ տարբեր նահանգներում հակահայկական բանաձեռն ընդունելու համար: Միսիսիպի նահանգը դարձավ 5-րդ նահանգը, որտեղ տապալվեց ադրբեջանամետ եւ հակահայկական բանաձեռը: Մարտին նման մի հակահայկական բանաձեռն թեմեսի նահանգի խորհրդարանը մերժեց: Իսկ մինչ այդ Հարավային Դակոտա, Հավայիի եւ Վայոմինգ նահանգներում տապալվեցին ադրբեջանամետ բանաձեռերը: Հատկանշական է, որ այդ նահանգներում մեծ չէ հայերի թիվը:

Վ. Հ.

### Արցախի ակնարկները Ռուսաստանին անելանելի վիճակի մեջ են դրել

Ղրիմի հանրաքվեի կապակցությամբ Արցախի բուռն արձագանքները, միգրացիոն կազմակերպիչների սպասումներին հակառակ, Ռուսաստանին դրեցին անելանելի վիճակի մեջ: Ենթադրությունները տարբեր էին, երբեմն՝ տեղին, երբեմն՝ անտեղի: Ի դեպ, ըստ որոշ տեղեկությունների՝ Ստեփանակերտում կայացած միջոցառումները նկարահանել էին ռուսական հեռուստաընկերությունները, սակայն այդպես էլ եթեր չէին հեռարձակել:

Եվ ահա, կարծես թե Մոսկվան արձագանքում է, բայց, ինչպես միշտ, ոչ թե պաշտոնապես, այլ Կրեմլին մոտ կանգնած ինչ որ մեկի շուրթերով: Այս անգամ դա արվեց Մաքսիմ Շեյնենկոյի միջոցով: Իսկ ո՞վ է Մաքսիմ Շեյնենկոն: Նա Ռուսաստանի Դաշնության նախագահին կից Ազգամիջյան հարաբերությունների խորհրդի անդամ է: Պարզ է, որ Շեյնենկոն ամենեւին էլ պատահական մարդ չէ, եւ չէր կարող՝ առանց Կրեմլի պաշտոնյաների հետ որեւէ համաձայնության նման հայտարարություն անել:

Եվ, ինչպես միշտ, հայաստանյան ՉԼՄ-ներում սկսվեցին մեկնաբանությունները հայտնի եւ անհայտ, քաղաքական եւ ոչ քաղաքական մեկնաբանների կողմից:

Շատերն են հասկանում, թե ինչ նշանակություն ունենի Շեյնենկոյի խոսքերը, որոնք, սակայն, տեղի ու անտեղի մեկնաբանությունների առարկա դարձան: Յուրաքանչյուրը պարտավորված զգաց՝ ինչ որ բան ասել: Սակայն ոչ ոք այդպես էլ ուշադրություն չդարձրեց, թե ինչ նպատակ էին հետապնդում Շեյնենկոյի մեկնաբանությունները եւ ում էին ուղղված: Բնական է, որ դրանով նա ամենեւին էլ նպատակ չունի ի ցույց դնել ադրբեջանական պատմության իր ունեցած «գիտելիքները»: Շեյնենկոն այնքան էլ անգրագետ չէ,

որ չիմանա տարածաշրջանի իրական պատմությունը: Այն ուղղված էր առաջին հերթին Ադրբեջանում կրքեր հանգստացնելուն, քանի որ Ադրբեջանում խիստ անհանգստացած էին Ղրիմում տեղի ունեցածով: Ղրիմը Ուկրաինայի կազմում էր հայտնվել ճիշտ այնպես, ինչպես Լեռնային Ղարաբաղը Ադրբեջանական ԽՍՀ-ի կազմում:

Սակայն, միաժամանակ, խոսքերն ուղղ-



ված էին նաեւ Հայաստանին ու Արցախին: Զանի որ՝ նույնիսկ անզեւ աչքով հստակ երեւում են որոշակի նմանություններ, Հայաստանին հասկացնում են, որ երբեք չփորձի Արցախի ու Ղրիմի միջեւ հավասարություն դնել, այսինքն՝ Ռուսաստանը փորձում է այդ նմանությունները չեզոքացնել: Հենց այդ նպատակն է հետապնդում Շեյնենկոյի «մտքի գոհարների» այն մասը, որտեղ նախ նա ասում է, որ չպետք է Ղրիմը համեմատել Լեռնային Ղարաբաղի

հետ, այնուհետեւ, որպես ապացույց, ասում, թե իբր՝ ի տարբերություն Ղրիմի՝ Արցախում եղել են էթնիկ գտումներ:

Սակայն Շեյնենկոն այստեղ մի մեծ վրիպում է արել: Նախ՝ Արցախում հայկական կողմից չի իրականացվել էթնիկ գտումներ՝ ի տարբերություն Ադրբեջանի, որտեղ նույնիսկ նախքան Արցախյան պատերազմը սկսվեցին հայերի նկատմամբ էթնիկ գտումները եւ մասսայական կոտորածները: Եվ երկրորդ, Արցախյան պատերազմը Ադրբեջանի կողմից իրականացված ագրեսիա էր, որի նպատակն էր հայաթափել Արցախը եւ ոչնչացնել այնտեղ բնակվող հայերին: Այդ են վկայում Արցախի խաղաղ բնակչության ոչնչացմանն ուղղված գործողությունները՝ քաղաքների ու գյուղերի ռմբակոծումը, այդ թվում նաեւ՝ ՄԱԿ-ի կողմից արգելված մասսայական ոչնչացման զինատեսակներով:

Շեյնենկոյի մտքի մեկ այլ «գոհարը», թե իբր ադրբեջանցիները տեղաբնակ են համարվում Արցախում՝ թուրքախոս ադրբեջանցիների խառնելով լեզվաբանական ու կրկնապատմական ժողովուրդներին, ընդհանրապես անհեթեթություն է, նույնիսկ պետք չէ անդրադառնալ դրա խնդրությանը: Սակայն այն հանգամանքը, որ Մոսկվան սկսել է իր շահերին ծառայեցնել ադրբեջանական քարոզամեքենայի կեղծիքները, մտահոգության տեղիք է տալիս:

Վահե ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

### Ամեն մի երիտասարդ արցախցի պատրաստ է գնալ եւ պաշտպանել մեր հայկական համայնքը Քեսաբում. Պարգեւ Արքեպիսկոպոս Մարտիրոսյան



ամեն ինչ անելու ցանկացած ոլորտներում: Նույնիսկ ամեն մի երիտասարդ արցախցի պատրաստ է գնալ եւ պաշտպանել մեր հայկական համայնքներն այնտեղ: Դա, եւ կարծում եմ, ե՛լ մեր իրավունքն է, ե՛լ մեր պարտականությունը: Որտեղ էլ որ հայ է ապրում եւ որտեղ վտանգված է նրանց կյանքը, մենք պարտավոր ենք իրենց օգնության

**Հարցազրույց Պարգեւ Արքեպիսկոպոս Մարտիրոսյանի հետ**  
- Այսօր համայն հայությանը մտահոգող հարցերից մեկը Քեսաբի իրավիճակն է: Ո՞րն է Ձեր տեսակետը այս հարցի շուրջ:  
- Ցավոք սրտի, գրեթե նույն ցեղասպանությունը 99 տարի անց կրկնվեց Քեսաբի հայության նկատմամբ: Քեսաբահայությունը երրորդ անգամ 21-րդ դարում բռնեց գաղթի ճամփան: Սա պետք է մտահոգի ոչ միայն մեզ, այլև ամբողջ աշխարհի քաղաքակիրթ ժողովրդին: Ամենքս պետք է բարձրացնենք մեր բողոքի ձայնը այսպիսի երեւոյթների նկատմամբ: Ցավալի է, որ Թուրքիայի միջնորդությամբ կատարվեց այս ամենը:  
- Ի՞նչ կարող է անել Արցախը այս դեպքում:  
- Կարծում եմ՝ մենք պատրաստ ենք

գնալ:  
- **Հայ առաքելական եկեղեցին ամենադժվարին պահերին միշտ ժողովրդի կողքին է եղել, պետք եղած դեպքում էլ՝ հենց հոգեւորականներն են առաջամարտիկներ եղել:** Ո՞րն է Հայ առաքելական եկեղեցու առաքելությունը Քեսաբի հարցում:  
- Այս հարցով մտահոգված են ե՛լ Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Բ-ն, ե՛լ Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Արամ Ա-ն: Արամ կաթողիկոսը իր բողոքի ձայնն է բարձրացնում բարձրագույն միջազգային ատյաններում, որին մենք տեղյակ ենք լրատվամիջոցներից: Իրենք իրենց բարձունքից պետք է փորձեն անել ամեն ինչ՝ իրենց կարողությունների, հնարավորությունների սահմաններում:  
**Հարցազրույց Արմինե ՆԱՐԻՆՅԱՆԻ**

### Բողոքի ցույց Թուրքիայի դեսպանատան դիմաց

Մարտի 31-ին Ֆրանսիայի մայրաքաղաք Փարիզում՝ թուրքական դեսպանատան դիմաց, Ֆրանսիայի ՀՀԴ Նոր սերունդ երիտասարդական միության նախաձեռնությամբ եւ կազմակերպմամբ տեղի է ունեցել բողոքի ցույց՝ ի պաշտպանություն Քեսաբի հայերի: Հաջորդ օրերին բողոքի ցույցեր տեղի ունեցան նաեւ Մարսելում եւ Լիոնում: Ցույցերին մասնակցեցին հազարավոր մարդիկ՝ հիմնականում երիտասարդներ:



Փարիզում 2007-ից հետո Թուրքիայի դեսպանատան դիմաց առաջին անգամ է բողոքի ցույց տեղի ունենում:  
Ցույցի ժամանակ ելույթներով հանդես եկան ՀՀԴ Ֆրանսիայի Կենտրոնական կոմիտեի ներկայացուցիչ Սուրադ Փափազյանը, ՀՀԴ Ֆրանսիայի Հայ Դատի պատասխանատու Հրաչ Կարծապետյանը, ՀՀԴ Ֆրանսիայի Նոր սերունդ երիտասարդական միության ատենապետ Լորիս Թուֆանյանը եւ ուրիշներ:  
ՀՀԴ Ֆրանսիայի ԿԿ ներկայացուցիչ Սուրադ Փափազյանը իր ելույթում նշեց. «Բողոքի հայերը լինեն Ֆրանսիայում, Ամերիկայում, Միջին Արեւելքում, Հայաստանում, թե Արցախում պետք է սա-

տար կանգնեն Քեսաբի հայերին, որպեսզի նրանք կարողանան վերադառնալ իրենց տները, նույնիսկ եթե դրանք արդեն քանդված են»: Բողոքի ելույթ ունեցողները դատապարտեցին Քեսաբի վրա հարձակումը եւ մեղադրեցին Թուրքիայի կառավարությանը այդ ամենին անմիջական մասնակցության համար, ինչպես նաեւ կոչ արվեց Արեւմուտքին եւ Ֆրանսիայի կառավարությանը՝ դադարեցնել զինել ծայրահեղական խմբավորումներին: Ելույթներում կարեւորվեց նաեւ այս խնդրում հայերի միասնականությունը:  
Ցույցի մասնակիցները վանկարկում էին «Ոճրագործ Էրդողան, դուրս Քեսաբից», «Էրդողանն էլ է Ալ-Զաիդայի ահաբեկիչ», «Քեսաբը մերն է», «Ոչ կմոռանանք, ոչ էլ կներենք Թուրքիային»:  
**Վահե ՀԱՐՈՒԹՅՈՒՅԱՆ**

### ԼՂՀ վարչապետ. «Մեր օրինական տարածքների մի մասը գտնվում է թշնամու վերահսկողության տակ»

Ապրիլի 12-ին ԼՂՀ վարչապետ Արա Հարությունյանը պատասխանել է ֆեյսբուքի եւ թվիթերի օգտատերերի հարցերին: Նախապես վարչապետի մամլո ծառայության կողմից հարցերը հավաքագրվել են ԼՂՀ կառավարության ֆեյսբուքյան էջի եւ ԼՂՀ վարչապետի մամլոյի քարտուղար Արտակ Բեգլարյանի թվիթերյան էջի միջոցով:  
Ֆեյսբուք սոցիալական ցանցի օգտատերերից մեկը խնդրել է մեկնաբանել Արցախի Սահմանադրության 142-րդ հոդվածը:  
«Մինչեւ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական տարածքի ամբողջականության վերականգնումը եւ սահմանների ճշգրտումը հանրային իշ-

խանությունն իրականացվում է այն տարածքում, որը փաստացի գտնվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության իրավագործության ներքո»: Մասնավորաբար՝  
- ի՞նչ ասել է «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական տարածք» եւ «սահմաններ», ո՞ր տարածքներն են ի նկատի առնվում այս հոդվածի մեջ,  
- ի՞նչ ասել է «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության իրավագործության ներքո գտնվող տարածքներ», ո՞րոնք են դրանք,  
- եւ եթե կա նման պայմանական հիպոթեզ տվյալ իրավական նորմի մեջ, ապա ի՞նչ դիսպոզիցիա է այն նախատե-

տում. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ենթադրյալ տարածքային ամբողջականության վերականգնումից հետո ո՞ր տարածքներում է շարունակվելու իրականացվել «հանրային իշխանությունը»: Ի պատասխան վերը նշված հարցին, վարչապետը նշեց, որ կան այլ ատյաններ, որոնց պետք է ուղղել այդ հարցը:  
«Սակայն, որպես կառավարության դեկլարացիոն կարող եմ ասել, որ մեր օրինական տարածքների մի մասը, ցավոք սրտի, գտնվում է թշնամու վերահսկողության տակ եւ դժբախտաբար այդ տարածքներում այսօր չենք կարող ծրագրեր իրականացնել: Իսկ մեր իրավագործության տակ գտնվող տարածքներում՝ ասեմ, որ արեւելքից-արեւմուտք, հարա-

վից-հյուսիս կամ Միջնավանից մինչեւ Նոր Կարաչինար, Արաքսավանից մինչեւ Թալիշ՝ սահմանի գրեթե բոլոր հատվածներում տարբեր աշխատանքներ ենք իրականացնում, հիմնադրում ենք նոր բնակավայրեր եւ այդ տարածքների յուրացման համար հստակ ներդրումային ծրագրեր են կազմվում, եւ այսօր քննարկվում է արդեն այդ տարածքների վարելահողերի սեփականաշնորհման հարցը: Արդյունքում կապահովվի մեր ժողովրդի պարենային անվտանգությունը, ինչպես նաեւ տնտեսական այլ ծրագրեր կիրականացվեն»,- ասաց ԼՂՀ վարչապետ Արա Հարությունյանը:  
**Ա. ՆԱՐԻՆՅԱՆ**

### Քսաներկու տարի առաջ Մարադայում կրկին հայի արյուն թափվեց

1992թ. ապրիլի 10-ին ադրբեջանական զինված ուժերը Լեռնային Ղարաբաղի Մարտակերտի շրջանի Մարադա գյուղում շարժ իրականացրին:  
Առավոտյան ժամը 5:00-ին սկսվել է գյուղի հրետակոծությունը: Կեսօրին մոտ ադրբեջանական «Գուրթուլուշ» վաշտը 20 զրահամեքենայի ուղեկցությամբ մտել է գյուղ: Պաշտպանական ուժերը (60 հոգի) տեսնելով, որ չեն կարող դիմադրել անհավասար ուժին, նահանջել են՝ զգուշացնելով գյուղի բնակիչներին:  
Մարադայի բնակչությունը լքել է գյուղը:

Իսկ ծերունիներն եւ հաշմանդամները պատսպարվել են նկուղներում: Մարտի 11-ին, երբ հայերը գյուղն ազատագրում են, գտնում են 43 խաղաղ բնակիչ դիակ. մի քանի դիակ գլխատված վիճակում են լինում, իսկ մյուսները՝ այրված կամ աչքերը հանված:  
Մեծ Բրիտանիայի Լորդերի պալատի նախկին փոխխոսնակ Զերոլայն Զոքսի հավաստմամբ՝ սպանվել է 45-ից ոչ պակաս բնակիչ: Ըստ հայկական անվանական ցանկի՝ զոհվել է 57 եւ գերեզմանավորվել 45 խաղաղ բնակիչ:

Գերիների թվում 9 երեխա կար, 18 կին, 3 տարեց եւ 1 կույր (տվյալները հաստատված են Միջազգային Helsinki Watch իրավապաշտպան կազմակերպության եւ Զերոլայն Զոքսի կողմից):  
Մեկ շաբաթ անց նոր հարձակում է կազմակերպվել Մարադայում, որի հետեւանքով բնակչությունը լքել է գյուղը եւ 13 հոգի գերեզմանավորվել են: Ընդհանուր առմամբ՝ գյուղում զոհվել է 90, տարբեր աստիճանի վերքեր են ստացել 37 մարդ, այդ թվում՝ 21 կին եւ 6 երեխա:  
Մարադա գյուղը գտնվում է Լեռնային

Ղարաբաղի հյուսիսում, Միրբաշիի շրջանի (Տերտերի շրջան) հարեւանությամբ: Ըստ 1989 թվականի մարդահամարի՝ գյուղում ապրում էր 4660 մարդ՝ հիմնականում հայ: Մինչեւ ապրիլի 10-ի իրադարձությունները գյուղը ենթարկվել է բազմակի հրետակոծության:  
Մարադայի կոտորածն իրագործելու համար «Գուրթուլուշ» վաշտի իրամասնատար Շահին Թալիբ օղլի Թագիեւը ստացել է Ադրբեջանի Ազգային հերոսի կոչում:  
**Ա. ԱՍՏՅԱՆ**

# Մեծ աշխատանքներ ենք տանում Արցախի անկախության եւ Հայոց ցեղասպանության ճանաչման ուղղությամբ

## Հարցազրույց ՀՀ Ավստրալիայի Հայ Դատի հանձնախմբի գրասենյակի տնօրեն Վաչե Գահրամանյանի հետ

- Վերջին տարիներին Ավստրալիայում բավականին ակտիվ գործունեություն է ծավալում Հայ Դատի գրասենյակը, եւ Արցախի անկախության ճանաչման ուղղությամբ մեծ աշխատանքներ են տարվում: Անցած տարի Ավստրալացի պատգամավորների խումբ էիք բերել Արցախ: Ո՞րն էր այդ այցի նպատակը:

- Ավստրալիան մի փոքր տարբերվում է այլ երկրներից, քանի որ չունենք հարեւաններ: Այն մի մեծ կղզի է, եւ երբ փորձում ենք պատգամավորներին ներկայացնել Արցախի հարցը՝ ասելով, որ կան սահմաններ, նրանք չեն կարողանում հստակ պատկերացնել՝ ինչ ասել է սահմաններ: Նրանք հստակորեն չեն պատկերացնում, որ երկիրը կարող է սահմաններ ունենալ: Ավստրալիան սահմաններ չունի, իր շուրջն օվկիանոս է: Նրանք չեն կարողանում ըմբռնել, թե ինչ դժվարությունների առաջ են կանգնեցնում Արցախին՝ սահմաններում լարվածության պատճառով, եւ այնտեղ առկա խնդիրներն ինչ ազդեցություն են ունենում ժողովրդի հոգեկան աշխարհի վրա: Եվ անգամ ինչ ազդեցություն ունի առեւտրի վրա կամ դիվանագիտական հարաբերություններում՝ սահմաններում առկա խնդիրները: Մենք այս ամենը մեկ առ մեկ բացատրում եւ պարզաբանում ենք Ավստրալիայի պատգամավորներին: Անցյալ տարի մենք Ավստրալիայի 7 պատգամավորների հետ այցելեցինք Արցախ: Դրանք անձիք էին, ովքեր անտարբեր չեն Արցախյան հիմնահարցի նկատմամբ եւ հաճախ են խոսել այդ հարցի մասին: Ավստրալիայի ամենամեծ նահանգն ընդունեց բանաձեւ Արցախի ինքնորոշման ճանաչման մասին: Իսկ այդ պատգամավորները, ովքեր եկան Արցախ եւ իրենց աչքով տեսան, թե ինչ նշանակություն ունի Արցախը, բոլորովին տարբեր մթնոլորտ ստեղծվեց հենց իրենց մտքերում: Շատ լավ եմ հիշում, երբ ԼՂՀ ԱԾ-ում Ավստրալիացի պատգամավորներից մեկը հարցրեց, թե ուր են փլատակ շենքերը: Նրանք զարմացած էին, որ Արցախը ոտքի է կանգնել եւ վերանորոգել է պատերազմի հետքերը: Նրանք զարմացել էին՝ տեսնելով, որ Արցախում ժողովուրդն ապրում է նորմալ, ինչպես Եւրոպական երկրներում են ապրում: Ավստրալիա վերադառնալով՝ նա իրապես կարողացավ ըմբռնել, թե Արցախը ոչ միայն ինչ-որ տարածք է, այլ մի պետություն է, որն ունի կառավարություն, եւ այդ երկրում ապրում է մի ամբողջ ժողովուրդ:

- Ավստրալիայի Հարավային Նոր Ուելս նահանգը ճանաչեց Արցախի անկախությունը խորհրդարանի մակարդակով: Ի՞նչ էք կարծում, այդ ճանաչման գործընթացը կարող է շղթայական լինել եւ արդյո՞ք այդ գործընթացը կտեղափոխվի այլ նահանգներ կամ այլ մակարդակներում այն կընդունվի:

- Մենք արդեն լծվել ենք այդ աշխատանքին, որպեսզի այլ նահանգներ եւս իրենց հերթին ճանաչեն ԼՂՀ անկախությունը, ինչպես այն արեց Նոր Հարավային Ուելս նահանգը 2012 թվականին: Բավականին մեծ է լուրջ աշխատանք է տարվում այդ ուղղությամբ Ավստրալիայի Հայ Դատի գրասենյակի կողմից, եւ հույս ունենք, որ այլ նահանգներ եւս իրենց հերթին նման բանաձեւեր կընդունեն, ինչպես եղել է Հայոց ցեղասպանության ճանաչման դեպքում: Արցախի անկախության ճանաչումը՝ Հայոց ցեղասպանության ճանաչումը՝ դրանք երկու հարցեր են, որոնց ուղղությամբ միաժամանակ մեծ աշխատանքներ ենք իրականացնում: Այդ երկու հարցերն էլ շատ մեծ նշանակություն ունեն, շատ մեծ կարեւորություն ունեն: Դրանցից մեկը՝ պատմական հարթակում, իսկ մյուսը՝ ներկա իրավիճակի նկատմամբ:

- Նոր Հարավային Ուելս նահանգի խորհրդարանի ընդունած բանաձեւից հետո արդյո՞ք եղան ճնշումներ Արբեջանի կողմից, եւ, առհասարակ, ի՞նչ խնդիրների

առաջ եք կանգնում, որպեսզի Ավստրալիան ճանաչի Արցախի անկախությունը:

- Կարող եմ մի պարզ օրինակ բերել: Երբ 2012 թվականին Նոր Հարավային Ուելսի խորհրդարանը որոշեցրեց եւ միաձայն ընդունեց բանաձեւ, որով ճանաչում էր Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը, թուրքերը փորձեցին որոշակի քայլեր ձեռնարկել: Մինչեւ 2013 թվականը Ավստրալիայում Արբեջանը չունեց դեսպանատուն, եւ երբ 7 պատգամավորներ Ավստրալիայից այցելեցին Արցախ, հենց այդ նույն ժամանակահատվածում Արբեջանը բացեց իր առաջին դեսպանատունն Ավստրալիայի մայրաքաղաքում: Փաստը ինքնին շատ հստակ է, թե ինչու: Բնականաբար՝ հակասելու մեր տարած աշխատանքներին Արցախի ճանաչման նկատմամբ: Ավստրալիան եւ Արբեջանը չունեն ոչ մի տնտեսական կամ քաղաքական կապ: Իհարկե, ամեն մի պետություն նման իրավունք ունի եւ մենք չենք կարող դրան դեմ լինել, սակայն փաստը հայտնի է, թե ինչու Ավստրալիայում Արբեջանը դեսպանատուն բացեց: Եվ անկախ այն բանից, թե որքան գումարներ են ծախսում իրենց սուտը առաջ տանելու

կանին հայտնի պատմաբան է եւ հայտնի է իր աշխատությամբ, որը Հայոց ցեղասպանության ճանաչման դեմ է: Նա իրավիճակ էր Ավստրալիա եւ երեք գլխավոր ելույթներ պետք է ունենար: Արդեն տեղյակ լինելով, թե որտեղ են նախատեսվում ելույթները, կապվեցինք այդ հանդիսությունների սրահների ղեկավարների հետ եւ ներկայացրինք, թե ով է այդ անձնավորությունը եւ ինչ է իրենից ներկայացնում: Եվ անմիջապես 2 հաստատությունները հրաժարվեցին տրամադրել իրենց սրահները այդ ելույթների համար: Սա նույնպես հաջողություն է: Բնականաբար, տեղական մամուլը նույնպես անդրադարձավ այդ ամենին, քանզի Հայոց ցեղասպանության իրողությունը աղավաղող ինչ-որ մեկը չպետք է հնարավորություն ունենա բեմ բարձրանալու եւ իր ասելիքը փոխանցելու: Բնականաբար, այդ ամենը թուրքերի համար բավականին մեծ վնաս էր, քանզի նրանք չկարողացան փոխանցել ժողովրդին այն, ինչ ուզում էին փոխանցել՝ խեղաթյուրելով պատմական իրողությունը:

Մենք Ավստրալիայում երկու գլխավոր հաջողություններ ենք ունեցել: Ավստրալի-

կապերը Ավստրալիայի հետ: Ապրիլի 24-ին, երբ մենք հարգանքի տուրք ենք մատուցում Ցեղասպանության զոհերի անմար հիշատակի համար, ապրիլի 25-ին Ավստրալիան պետք է տոնի առաջին համաշխարհային պատերազմի իր գլխավոր տոնակատարությունը: Թուրքերը կարողացել են օգտագործել այդ թվականը իրենց շահի համար: Մենք՝ որպես հայ ազգ, որը գտնվում է Ավստրալիայում, մեր ձեռքին ունենք մեծ փաստ բոլոր այդ սպառնալիքների դեմ: Դա այն է, որ Ավստրալիան մարդասիրական օժանդակություն է ցուցաբերել Հայոց ցեղասպանությունից մազապուրծ եղած որբերին: Լիբանանում ներկայումս Կիլիկիո թեմի առաջնորդարանի շենքը՝ նախքան առաջնորդարան լինելը եղել է որբանոց, եւ Ավստրալիացիները հոգ են տարել մոտ 1500 հայ որբերի համար: Դա եղել է 1915-1927 թվականներին: Կան բազմաթիվ օրինակներ, որ Ավստրալիայի բժիշկներ եւ այլ մասնագետներ գաղթել են միջին արեւելք հայ որբերին հոգ տանելու համար: Ավստրալիայի տարբեր շրջաններում նստած կանայք իրենց ձեռքերով են հագուստներ կարել եւ ուղարկել այդ որբանոցներին: Նաեւ այլուր ու ցորեն են ուղարկել, որպեսզի այդ երեխաները սոված չմնան: Դա Ավստրալիայի ներքին պատմությունն է, որը թուրքերը խախտել չեն կարող: Իսկ այս ամենը ուժ է մեր ձեռքին, առավել եւս՝ որ մոտենում է 100-ամյակը եւ լուրջ աշխատանք կա այդ ներքին տեղական պատմության ճանաչման նկատմամբ՝ կապված Հայոց ցեղասպանության հետ: Մենք լուրջ աշխատանք ունենք անելու, որպեսզի Ավստրալիան իր հերթին ճանաչի Հայոց ցեղասպանությունը:

- Որքանով տեղյակ եմ՝ առաջիկայում լրագրողների խումբ եք բերելու Հայաստան: Արդյո՞ք նախատեսվում է նաեւ պաշտոնական ներկայացուցիչների այց Հայաստան կամ Արցախ:

- Հավանաբար մեր հաջորդ այցելությունը Հայաստան՝ կլինի միայն լրագրողների հետ: Մենք ունենք ծրագրեր՝ տարբեր ներկայացուցիչներ բերել Արցախ եւ Հայաստան: Բայց քանի որ եկող տարի Ցեղասպանության 100-ամյակն է, ուզում ենք, որ մեր տեղական թերթերն ավելի լայնորեն գրեն ոչ միայն Ցեղասպանության մասին, այլ ընդհանրապես Հայաստանի մասին, քանզի բազմաթիվ Ավստրալիացիներ Հայաստանի մասին գրեթե չգիտեն: Չի բացառվում, որ այդ ամենից հետո ցանկություն ունենան այցելել Հայաստան՝ որպես գրոսաշրջիկ: Այն ծրագիրը, որն ուզում ենք իրականացնել, կենտրոնացած է ոչ միայն Արցախի վրա կամ Ցեղասպանության ճանաչման վրա, այլ Հայաստանի տնտեսական զարգացման վրա:

Չնայած Հայ Դատը, որը Հայ Ցեղափոխական Դաշնակցության քաղաքական բաժինն է, միայն Դաշնակցության խնդիրը չէ: Նախավոր չէ, որ աշխարհի երեսին մեկ հայ լինի, ով դեմ կլինի Հայ Դատին: Դա արդեն իսկ շատ մեծ հաջողություն է: Մեր խնդիրն է՝ նրանց համախմբել եւ նրանց սրտերում միշտ վառ պահել հայրենիքի գաղափարը: Կա թյուր կարծիք, որ 100-ամյակին, եթե Թուրքիան ճանաչի Հայոց ցեղասպանության իրողությունը, ապա դա կլինի վերջնակետը: Դա բոլորովին սխալ մտածելակերպ է, քանզի Հայոց ցեղասպանության ճանաչումն արդեն իսկ առաջին մարտահրավերն է: Մենք ունենք հողային պահանջ, հատուցում եւ այլ պահանջներ: Եվ այդ ժամկետը կարելու չէ: Իհարկե, հաջորդ տարի լրանում է 100-ամյակը, բայց դա կարելու չէ: Եթե տեւի 200 տարի, որ հասնենք մեր պայքարի արդյունքին, ուրեմն աշխատանքները կտարվեն մինչեւ այդ ժամանակ, մինչեւ մեր բոլոր պահանջները կիրականան:

Հարցազրույց՝ Սևի ԱՍՏՅԱՆԻ



համար, միեւնույն է՝ մենք համոզված ենք, որ ճշմարտությունը վաղ թե ուշ հաղթելու է: Նոր Հարավային Ուելս նահանգի ճանաչումը մեծ արձագանք ունեցավ հենց տեղական շրջանակներում: Դաշնային կառավարությունը եւ խորհրդարանը քաջատեղյակ են, որ նման բանաձեւ է ընդունվել: Արդեն իսկ փաստն առկա է, որ Ավստրալիայի մայրաքաղաքում ղեկավարներն ու խորհրդարանականները լսեցին Արցախի մասին: Մենք հույս ունենք, որ այլ նահանգներ եւս իրենց հերթին կճանաչեն Լեռնային Ղարաբաղի անկախությունը: Բնականաբար, այդ ամենը մեկ օրվա աշխատանք չէ: Մեր ցանկալի արդյունքին հասնելու համար երկար ժամկետ են քրտնաջան աշխատանք է պահանջվում, սակայն մենք համոզված ենք, որ ժամանակի ընթացքում մենք մեր ցանկալի արդյունքին հասնելու ենք:

- Ցեղասպանության 100-ամյա տարելիցին ընդառաջ Հայ Դատի գրասենյակի աշխատանքներն ակտիվացել են, եւ, առհասարակ, ի՞նչ աշխատանքներ է այսօր կատարում Ավստրալիայի Հայ Դատի գրասենյակը եւ ի՞նչ խնդիրների եք հանդիպում:

- Խնդիրները գրեթե նույնն են՝ ինչ աշխարհի բոլոր երկրներում է առկա: Թուրքիան Հայոց ցեղասպանության ճանաչման դեմ սպառնալիքներ է տեղում: Այդ հարցում արդեն տարիների փորձառություն ունենք եւ այդ ամենը նորություն չէ մեզ համար, սակայն պետք է միշտ պատրաստ լինենք հակասելու այդ բոլոր սպառնալիքներին, ինչը եւ անում ենք: Կարող եմ մի պարզ օրինակ բերել: 2013 թվականի վերջին թուրքական համայնքը Ավստրալիայում իրապես սկսել է ակտիվանալ: Նրանք Ամերիկայից մի պատմաբան էին հրավիրել Ջաստին Մաքարթի անունով: Նա բավա-

# Այսօր ջավախահայությունն ազգային ինքնության պահպանման խնդիր ունի Հարցազրույց Սամվել-Ջավախքի հայկական հասարակական կազմակերպությունների խորհրդի համակարգող Արտակ Գաբրիելյանի հետ

- Ինչպես Արցախը, այնպես էլ Ջավախքը հայ ժողովրդի համար կարևորագույն նշանակություն ունեցող երկրամաս է: Այն Հայաստանի Հանրապետությանից դուրս մեր պատմական հայրենիքի միակ տարածքն է, որտեղ դեռևս հայ ժողովուրդ է բնակվում: Բոլորին հայտնի է, որ Ջավախքն ու ջավախահայությունն ունեն բազմաթիվ խնդիրներ. որո՞նք են այսօր ջավախահայության կարևորագույն խնդիրները:

- Ջավախքի հիմնախնդիրները բազմազան են ու բազմաբնույթ: Կփորձեմ առանձնացնել հույժ կարեւոր խնդիրները: Նախ Կրաստանի ցանկացած իշխանության խտրական քաղաքականության արդյունքում բոլոր խնդիրների տողատակերում քաղաքական ենթատեքստ կա եւ բոլոր խնդիրները համարվում են քաղաքական խնդիրներ: Այսօր ջավախահայությունն ազգային ինքնության պահպանման խնդիր ունի: Առկա են լեզվական, կրթական, մշակութային, առողջապահական եւ, ամենակարեւորը, սոցիալ-տնտեսական խնդիրներ: Հետխորհրդային ժամանակաշրջանում, երբ Կրաստանն անկախացավ, իշխանության գլխին կանգնած էր Գամսախորդիան, որն այսպիսի մի հայտարարություն արեց. «Կրաստանը վրացիների համար»: Այսինքն՝ Կրաստանը, լինելով բազմազգ երկիր, այդ հայտարարության տրամաբանության համաձայն պետք է թողնեին մյուս ազգությունները եւ հեռանալին Կրաստանից: Դա տեղի չունեցավ եւ իրենք սկսեցին իրագործել ձուլման քաղաքականություն՝ հատկապես հայերի շրջանում, որովհետեւ հետխորհրդային ժամանակաշրջանում՝ 90-ական թվականներին, հայերը եւ թվաքանակով էին շատ, եւ ակտիվ էին: Դա ինչ-որ չափով ստացվեց իրենց մոտ եւ դա մանավանդ արվեց վիրահայության շրջանակներում: Ջավախքում այդքան շատ չգնաց ձուլման պրոցեսը, որովհետեւ Ջավախքը միատարր էր, իսկ մնացած շրջաններում՝ բուն մայրաքաղաք Թբիլիսիում, Կախեթիում, Գորիի շրջաններում, ուր բավական թվով հայեր էին ապրում, չդիմանալով ձուլման այդ գործընթացին՝ արտագաղթեցին, իսկ մի մասն էլ ձուլվեցին:

Առողջապահական համակարգը մասնագետների կարիք ունի: Զկան համապատասխան բժշկական սարքավորումներ: Ջավախքում առաջին բուժօգնություն են միայն կարողանում ցուցաբերել:

Ջավախքի հանդեպ խտրական վերաբերմունքն առկա է նաեւ սոցիալ-տնտեսական բնագավառում: Անգամ գյուղատնտեսական արտադրանքների ձեռք բերման առումով Կրաստանը նույն ապ-

րանքը նախընտրում է ձեռք բերել Թուրքիայից, այլ ոչ թե Ջավախքից: Բնականաբար, ձեռք է բերում համեմատաբար ավելի էժան գնով, բայց անորակ ապրանք:

Աշխատանք չլինելու պատճառով երիտասարդություն արտագաղթում է: Եվ ցավալին այն է, որ գրագետ երիտասարդությունն էլ է գնում: Երիտասարդների մի մասը Հայաստանի բուհերում ուսումնական արտելուց հետո չի վերադառնում Ջավախք, քանզի աշխատատեղ չկա եւ պետական լեզվին էլ չեն տիրապետում, իսկ դա կարեւոր է: Ցավով պետք է նշեմ, որ



հավանաբար առաջիկայում Ջավախքի դպրոցներում լուրջ մանագետներ չեն լինի:

Ջավախքում բոլոր դպրոցները հանրակրթական դպրոցներ են: Հայկական դպրոց, որպես այդպիսին, դե յուրե գոյություն չունի, բայց դե ֆակտո այդ դպրոցները հայկական են: Կրացիները ուսուցման համար երկլեզու համակարգ են մշակել, բայց եթե տեղի մանկավարժը վրացերենին չի տիրապետում, ինչպես կարող է դասը երկլեզու անցկացնել: Եվ այս ամենը անորոշություն է ստեղծում:

Կրաստանը մի շարք պարտավորություններ ու պարտականություններ է ստանձնել Եվրոպայի խորհրդի առաջ, իսկ ամենակարեւոր պարտականություններից մեկը, որ ծրագրել է, դա «ազգային փոքրամասնությունների պաշտպանության մասին շրջանակային կոնվենցիան» է, որը ներառում է մի շարք ենթակետեր. դրանց մեջ առանձնացվում է լեզվի մասին հարցը: Ըստ այդ կոնվենցիայի՝ ազգային փոքրամասնություններն իրավունք ունեն, որ իրենց մայրենի լեզուն ստանա պետական երկրորդ լեզվի կարգավիճակ: Այսինքն, Սամվել-Ջավախքի տարածաշրջանում հայերենը կարող է դառնալ երկրորդ պետական լե-

զու կամ տարածաշրջանային լեզու: Զգիտե՛ք ինչու արեւմուտքն այս ամենի վրա աչք է փակում, ինչը համարվում է կոպիտ խախտում, քանզի ստորագրել է տվյալ շրջանակային կոնվենցիան, սակայն իրականացրել է որոշակի վերապահումներով:

**Ջավախահայությունը Կրաստանում հաճախակի է խնդիրների առաջ կանգնում՝ հատկապես վրացերեն լեզվի չիմացության պատճառով, ինչը եւս մեկ առիթ է ճնշման լծակ է հանդիսանում վրացական իշխանությունների համար: Մի փոքր մանրամասնեք այդ խնդրի մասին:**

- Խորհրդային Միության ժամանակաշրջանում օրենքին համապատասխան գործում էին հայկական դպրոցներ եւ այդ հարցում որեւէ խնդիր չկար, իսկ այսօր Կրաստանի սահմանադրությամբ ամրագրված է, որ Կրաստանի պետական լեզուն վրացերենն է: Վերջին 10 տարիների ընթացքում՝ Սահակաշվիլիի իշխանության ժամանակաշրջանում, ստեղծվեց լեզվի պետական ոստիկանություն, այսինքն՝ յուրաքանչյուր իրավաբանական անձ, եթե ինչ-որ մեկի հետ շփվում է, ապա պետք է խոսի վրացերեն, այն էլ գրագետ լեզվով: Ջավախքցիների ամենակարեւոր խնդիրը պետական լեզվին՝ վրացերենին տիրապետելն է: Սակայն պետք է հաշվի առնվի այն հանգամանքը, որ պետական լեզվի չիմացությունը տեղի ժողովրդի մեղավորության արդյունք չէ: Ինչպես գիտենք, 1921 թվականին Ադրիանապոլսի պայմանագրով ինչպես հայկական Արցախն է տրվել Ադրբեջանին, այնպես էլ հայկական Ջավախքն է տրվել Կրաստանին: Դրան հաջորդեց Խորհրդային Միության 70 տարի տևողությամբ ժամանակահատվածը: 1991-2003 թվականներին վրացերեն լեզվի չիմացության խնդիրը խիստ չէր դրված, իսկ վերջին տարիներին Սահակաշ-

վիլիի իշխանությունն ուզում էր, որ միանգամից կախարհական փայտիկի օգնությամբ ամբողջ ժողովրդին վրացերեն սովորեցներ: Տեղի իրավիճակն ուսումնասիրելով՝ եկել ենք այն եզրակացության, որ նախորդ իշխանություններն իրենց առաջ լուրջ խնդիր չէին դրել վրացերեն լեզվի իմացության համար եւ հավանաբար իրենց ձեռնադրում էլ չէր, որ հայերը տիրապետեն վրացերեն լեզվին: Իսկ այն ինտեգրման քաղաքականությունը, որն այս տաս տարիների ընթացքում քարոզեցին եւ Արեւմուտքից դրա համար բավականին լուրջ գումարներ ստացան, չի ծառայել իր նպատակին: Ջավախքի ժողովուրդն իրականում ուզում է սովորել վրացերեն, բայց դրա համար համապատասխան կենտրոններ չկան, համապատասխան մեթոդներ չկան, որպեսզի դպրոցական մակարդակից գատ, ինչ-որ տեղ լինի, որ չափահաս մարդը կարողանա սովորել լեզուն: Եվ լեզվի չիմացության պատճառն իրենց համար առիթ էր, որպեսզի ճնշման քաղաքականությունն էլ ավելի մեծացնեին հայերի նկատմամբ: Ջավախքից 4000-4500 ուսանողներ են սովորում են Երեւանի բուհերում, իսկ Կրաստանի բուհերում մի քանի հարյուր ուսանող է կրթություն ստանում: Ջավախքի ժողովրդի կապը հիմնականում Երեւանի հետ է:

**Նոր կառավարությունը ի՞նչ փոփոխություններ մտցրեց ջավախահայության կյանքում:**

- Սահակաշվիլիի իշխանության ժամանակ տարածաշրջանը ղեկավարվում էր հիմնականում ուժային կառույցների կողմից: Այդ առումով որոշակի փոփոխություն կա, բայց սահմանին առկա խնդիրները դեռ շարունակվում են: Ուժային կառույցների կողմից հետապնդումներ չկան արդեն: Սակայն հաշվի առնելով, որ այս նոր իշխանությունը ընդամենը մեկ տարվա իշխանություն է, բնականաբար նրանք չէին էլ հասցնի որոշակի շոշափելի արդյունք ցույց տալ, որպեսզի հասարակ ժողովուրդին իր մաշկի վրա զգա նախկին եւ ներկա իշխանությունների տարբերությունը: Բայց, իմ կարծիքով, բավականին խոստումնալից է Կրաստանի այս նոր իշխանությունը:

Ի դեպ, վերոնշյալ խնդիրները բազմիցս բարձրացվել են Կրաստանի նախորդ իշխանությունների առաջ: Այդ հարցերը բարձրացվել են նաեւ Եվրոպական խորհրդարանում: Ներկայումս ուզում ենք ակտիվ աշխատանքներ տանել այդ ուղղությամբ, քանի որ հունիսին Կրաստանը ստորագրելու է ասոցացման համաձայնագիր:

*Պատրաստեց Անի ԱՇՍՏՅԱՆԸ*

## Շահումյանի շրջանում նշվել է Քարվաճառի ազատագրման 21-ամյակը

Ապրիլի 4-ին Շահումյանի շրջանում նշվեց Քարվաճառի ազատագրման 21-րդ տարեդարձը: Տոնի առիթով Արցախյան ազատամարտում նահատակված քաջորդիների փառքը հավերժացնող խաչքար-հուշարձան էին այցելել շրջանի ղեկավարության ներկայացուցիչներ, Քարվաճառի բնակիչներ, ուսուցիչներ, դպրոցականներ: Նրանք ծաղկեպսակներ եւ ծաղիկներ դրեցին խաչքար-հուշարձանին: Օրվա խորհուրդով ելույթ ունեցավ Վ. Սարյոյանի անվան դպրոցի զինղեկ Վահագն Մովսիսյանը: Տեղի ունեցավ «Պատանի երկրապահների» հանդիսավոր երդում:

Ամուկքով, հայրենասիրական երգերով ու պարերով միջոցառումը շարունակեցին Շահումյանի շրջանի «Մանկապատանեկան ստեղծագործական կենտրոնի» սաները: Շահումյանի շրջանի վարչակազմի ղեկավար Վիտալի Դանիելյանի կողմից եղան նաեւ պարզեատրումներ հուշանվերներով:

1993թ. մարտի 27-ից մինչեւ ապրիլի 5-ը սկսվեց Քարվաճառի շրջանի ադրբեջանական ռազմականների ոչնչացման գործողությունը, որոնք լուրջ սպառնալիք էին դարձել ԼՂՀ արեւմտյան սահմանների համար: Մարտի 29-ին քաղաքն արդեն պաշարված էր, 3 օրում հայկական ուժե-

րը ազատագրեցին շրջկենտրոնը: Ապրիլի 2-ին ճնշվեցին Քարվաճառի կրակակետերը: Ազատագրելով Քարվաճառը Գանձակի հետ կապող խաչմերուկը՝ դարաբայան ուժերն ապրիլի 5-ին դուրս եկան Օմարի լեռնանցքի մոտ:

Քարվաճառը կարելու ռազմավարական կետ էր հայկական կողմի համար, որի ազատագրման արդյունքում կայուն կապ հաստատվեց Հայաստանի ու ԼՂՀ-ի միջեւ, զգալիորեն կրճատվեց ճակատային գիծը՝ թիկունք ապահովելով Մարտակերտի շրջանին:

Քարվաճառի ռազմագործողության հաջող ավարտից հետո ռազմաքաղաքա-

կան իրավիճակը որակապես փոխվեց, ռազմավարական նախաձեռնությունը պատերազմում վերջնականապես անցավ Արցախին: Քարվաճառը հսկայական ռազմավարական նշանակություն ունի: Այն ապահովում է արցախցիների ռազմական, տնտեսական, ջրային անվտանգությունը:

Քարվաճառի ազատագրումը Արցախյան պատերազմի բեկումնային պահերից մեկն է, որն առանցքային նշանակություն ունեցավ ոչ միայն Արցախի, այլեւ համայն հայության համար:

*Լիլիթ ՍՎԱՆՏՅԱՆ*

### ԼՂՀ ԱԺ «Դաշնակցություն» խմբակցության հանդիպումները համայնքներում շարունակվում են

ԼՂՀ ԱԺ «Դաշնակցություն» խմբակցությունը, իր ծրագրային դրույթների համաձայն, սույն թվականի ապրիլի 1-ին հանդիպում է ունեցել Ասկերանի շրջանի Պատարա համայնքի բնակիչների հետ: Հանդիպմանը խմբակցությունից ներկա էին պատգամավորներ Արմեն Սարգսյանը, Կամո Բարսեղյանը և Վահրամ Բալայանը:

Ողջույնի խոսքով հանդես եկավ պատգամավոր Կամո Բարսեղյանը՝ միաժամանակ ներկայացնելով հանդիպման նպատակը:

Հանդիպումն ընթացավ երեք բաժնով: Առաջին բաժնում պատգամավոր Արմեն Սարգսյանը ներկայացրեց Ազգային ժողովի և Ազգային ժողովում «Դաշնակցություն» խմբակցության գործունեությունը:

Իր խոսքում գյուղացիներին բացատրեց խմբակցության կողմից օրենքների նախագծերին դեմ քվեարկելու պատճառները, ներկայացրեց խմբակցության կողմից բարձրացված հարցերը, կազմակերպած

միջոցառումները, այն օրենքների նախագծերը, որոնք շուրջ աշխատում են խմբակցության անդամները:

Երկրորդ բաժնում ներկայացրեց Դաշնակցության գործունեությունն Արցախում՝ առանձնացնելով հատկապես գյուղատնտեսության և արդյունաբերության զարգացման ոլորտում կատարած աշխատանքները, վերաբնակեցման քաղաքականությանն ուղղված աշխատանքները:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ճանաչման գործում խմբակցության և ՀՀ Դաշնակցություն կուսակցության կատարած աշխատանքներն ավելի մանրամասնորեն ներկայացրեց պատգամավոր Վահրամ Բալայանը: Իր խոսքում նա կարեւորեց, որ այդ գործում ամենամեծ անելիքն ունի արցախցի, որի թիվ մեկ խնդիրը պետք է լինի երկրի շենացումը:

Գյուղացիներին ներկայացրեց, որ Դաշնակցությունը, լինելով համահայկական կառույց, լուրջ աշխատանքներ է ծավալել

ԼՂՀ ճանաչման գործընթացում, և հիմնականում ՀՀ-ի միջոցով է, որ արդեն Ավստրալիայի Նոր Ուելս և ԱՄՆ հինգ նահանգներ ու մի շարք քաղաքներ ճանաչել են ԼՂՀ անկախությունը:

Վահրամ Բալայանը ներկայացրեց վերջերս Արցախում կազմակերպված խորհրդաժողովի մասին, որի հիմնական թեմաներն էին ԼՂՀ սոցիալ-տնտեսական վիճակը, վերաբնակեցման հիմնահարցերը, միջազգային ասպարեզում Թուրքիայի և Ադրբեջանի հակահայկական լոբբինգը չեզոքացնելը, Արցախի տնտեսական զարգացմանը նոր թափ հաղորդելը և միջազգային ճանաչմանն ուղղված Դաշնակցության անելիքները:

Երրորդ բաժնում խմբակցությունը պատասխանեց բնակչությանը հուզող հարցերին, որոնք հիմնականում վերաբերվում էին գազի, հեռախոսակապի գների, մեքենաների տեխնիկաներ, կրթական համակարգին և այլ ոլորտների:

Մի շարք հարցեր խմբակցությունը խոստացավ բարձրացնել Ազգային ժողովում:

Հանդիպման վերջում Պատարա համայնքի ղեկավար Կարեն Արզումանյանը, ինչպես նաև գյուղի բնակիչները շնորհակալություն հայտնեցին խմբակցությանը՝ նշելով, որ նմանատիպ հանդիպումները երկուստեք շատ կարևոր են: Իր հերթին էլ «Դաշնակցություն» խմբակցությունը շնորհակալություն հայտնեց վստահության համար՝ ավելացնելով, որ գյուղացիները չսպասեն նմանատիպ հանդիպումների, այլ գյուղապետի միջոցով կամ անձամբ ներկայացնեն իրենց հուզող հարցերը:

Նշենք, որ «Դաշնակցություն» խմբակցությունը երկրորդ անգամ է հանդիպում կազմակերպում Պատարա համայնքում:

**ԼՂՀ ԱԺ «Դաշնակցություն»  
խմբակցության գրասենյակ**

### «Դաշնակցություն» խմբակցությունը տումեցիներին ներկայացրեց իր գործունեության արդյունքները և ապագա անելիքները

ԼՂՀ ԱԺ «Դաշնակցություն» խմբակցությունը սույն թվականի ապրիլի 9-ին հանդիպում ունեցավ Տումի համայնքում: Հանդիպմանը խմբակցությունից ներկա էին Արմեն Սարգսյանը և Կամո Բարսեղյանը: Ներկա էին նաև ՀՀ Արցախի ԿԿ ներկայացուցիչ Դավիթ Իշխանյանը, ԿԿ անդամ Լեւոն Հայրյանը, ինչպես նաև Հարությունի շրջանի «Դիզակ» կոմիտեի ներկայացուցիչ Նորիկ Գալստյանը և Արծվիկ Լալայանը:

Հանդիպման սկզբից Լ. Հայրյանը նշեց, որ համաձայն 2010թ. նախընտրական խոստումների՝ այս հանդիպումը թվով երկրորդն է, միաժամանակ ավելացրեց, որ եթե մինչև անգամ ՀՀ Դաշնակցությունը ԼՂՀ խորհրդարանում տեղ չգրադեցներ, նման հանդիպումները Դաշնակցության պարտականությունն է, որը չպետք է ծառայի ինքնակատակ պետք է երկուստեք ծանոթանալ իրավիճակներին՝ ծառայելու հայրենակերտմանը:

Ելույթով հանդես եկավ ԿԿ ներկայացուցիչ Դավիթ Իշխանյանը՝ նշելով, որ Տումի գյուղը պատմական Արցախի այն գյուղերից է, որտեղ չարժե շատ խոսել Դաշնակցության կատարած աշխատանքներից, որովհետև այստեղ են նաև Դաշնակցության արմատները և անհրաժեշտության դեպքում նրանք անպայման ծիլեր կտան: Նա նշեց, որ ավելի ճիշտ կլինի այս հանդիպմանը ներկայացնել ներկայումս Դաշնակցության կողմից տարվող աշխատանքները և ապագայում ՀՀ-ի անելիքները, որում պետք է տեղ գտնեն նաև նման հանդիպումներում առաջադրված առաջարկություններն ու հարցերը: «Դաշնակցությանը վայել չէ անցյալի կատարած աշխատանք-

ներով ներկայանալ ժողովրդին, այլ մեր պարտքն է բարձրացնել ժողովրդի խնդիրները և լուծում գտնել»,- նշեց նա:

ԼՂՀ Ազգային ժողովի «Դաշնակցություն» խմբակցության ղեկավար Արմեն

առանձնացրեց վերաբնակեցման քաղաքականությանն ուղղված ու բանակի հետ կապված հարցերը: Կարևորեց ԼՂՀ ճանաչման գործընթացում Դաշնակցության կատարած աշխատանքները:



Սարգսյանն ընդհանուր ներկայացրեց «Դաշնակցություն» խմբակցության գործունեությունը ԼՂՀ ԱԺ-ում: Բացատրեց ներկայիս դեմ քվեարկած օրենքների պատճառները՝ միաժամանակ նշելով, որ դրանք կատարվել են ոչ թե ժողովրդի աչքին բարձրանալու համար, այլ այն պատճառով, որ Դաշնակցությունը ունի տվյալ ոլորտներում երկրի զարգացման իր սեփական ծրագրերը: Ավելացրեց նաև, որ խմբակցությունը ԼՂՀ կառավարությանն է ներկայացրել երկրի զարգացմանն ուղղված ծրագրեր, դրանցից

Պատգամավոր Կամո Բարսեղյանը նշեց, որ այս հանդիպումներից է կախված մեր հետագա անելիքները խորհրդարանում, և ճիշտ կլինի չսպասել միայն նմանատիպ հանդիպումների. առաջացած հարցերը կարող են Տումիի դաշնակցական խմբի միջոցով հասնել իրենց:

Հանդիպման մասնակիցներին հիմնականում հուզում էր գյուղում Թեան Ստեփանյանի հիշատակին նվիրված հուշարձանի բացակայությունը և ակնկալում են Դաշնակցության աջակցությունը:

**ԼՂՀ ԱԺ «Դաշնակցություն»  
խմբակցության գրասենյակ**

### Կոմսականում բնակարաններ են հանձնել սիրիահայ ընտանիքներին

2014 թվականի ապրիլի 11-ին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Զաշաթաղի շրջանի Կոմսական քաղաքում տեղի է ունեցել բազմաբնակարան շենքի բնակարանամուտի հանդիսավոր արարողություն, որին ներկա էին Արցախի Հանրապետության նախագահ Բակո Սահակյանը, ՀՀ Դաշնակցության Արցախի ԿԿ ներկայացուցիչ Դավիթ Իշխանյանը, ԱԺ «Դաշնակցություն» խմբակցության անդամ Կամո Մարտիրոսյանը և «Օգնիր Եղբորդ» բարեգործական հիմնադրամի պատվիրակությունը:

Արցախի նախագահն այցելել է նաև Կոմսականի նորակառույց հիվանդանոց և

քաղաքում կառուցվող նոր մանկապարտեզի շինհարթակ: Բակո Սահակյանը կարևորել է Արցախի հարավային շրջանների զարգացումը և բնակչության սոցիալ-տնտեսական պայմանների բարելավումը:

Բազմաբնակարան շենքում բնակարաններ են ստացել նաև տասը սիրիահայ ընտանիքներ, որոնք այս տարիների ընթացքում տեղափոխվել և վերաբնակեցվել են Կոմսականում:

«Օգնիր Եղբորդ» բարեգործական հիմնադրամը նույնպես իր ներդրումն է ունեցել բազմաբնակարան շենքի կառուցման գործում՝ այդպիսով նպաստելով Ազատ և Ա-

կախ Արցախի վերաբնակեցման քաղաքականությանը և զարգացմանը:

«Օգնիր Եղբորդ» բարեգործական հիմնադրամի պատվիրակությունը հանդիպել է նաև Կոմսականում վերաբնակեցված սիրիահայ ընտանիքների հետ՝ ծանոթանալով նրանց խնդիրներին: Հիմնադրամի պատվիրակությունը հանդիպումներ է ունեցել նաև Զաշաթաղի շրջանի աշխատակազմի, «Զաշաթաղ» հիմնադրամի հետ և ձեռք բերել մի շարք պայմանավորվածություններ հետագա ծրագրերի իրագործման ուղղությամբ: «Օգնիր Եղբորդ» բարեգործական հիմնադրամը վերահաստատեց իր հանձ-

նառությունը՝ աջակցելու հայրենիք տեղափոխված սիրիահայությանը, և ես մեկ անգամ հայտարարեց, որ տվյալ ծրագրի շրջանակներում կատարվող աշխատանքները շարունակական են և սիրիահայությունը դեռևս կարող է ցանկազորվել Կոմսականում վերաբնակեցվելու նպատակով:

«Օգնիր Եղբորդ» բարեգործական հիմնադրամը շնորհավորում է Արցախում իրենց տունը կառուցած սիրիահայ ընտանիքներին և մաղթում բարեբեր և արդյունավետ աշխատանք հետագա գործունեության մեջ:

**ԱՍԻ ԱՆՍՏՅՈՒ**

# Իրանի խորհրդարանի փոխնախագահն իր ելույթում երեք անգամ օգտագործեց Ցեղասպանություն բառը

## Հարցազրույց ՀՀԴ Հյուսիսային Իրանի Հայ Դատի հանձնախմբի ներկայացուցիչ Իսակ Յունանեյանի հետ



Վերջերս Արցախում տեղի ունեցած ՀՀԴ Միջմարմնական խորհրդածողովի շրջանակներում Արցախ էր այցելել նաև ՀՀԴ Հյուսիսային Իրանի Հայ Դատի հանձնախմբի ներկայացուցիչ Իսակ Յունանեյանը:

Ձեզ ենք ներկայացնում «Ապառաժ» հետ Իսակ Յունանեյանի հարցազրույցը:

**- Այսօր Իրանում ի՞նչ գործունեություն են ծավալում Հայ Դատի գրասենյակները:**

- Իրանում գործում են ՀՀԴ Հայ Դատի երկու գրասենյակներ՝ Թեհրանում և Իսպահանում: Թեհրանի Հայ Դատի գրասենյակը կոչվում է ՀՀԴԿ (հայ ուսումնա-

սիրաց հաստատություն): Մենք Իրանում չենք կարող ազատորեն քաղաքական աշխատանքներ տանել, դրա համար աշխատում ենք այս հաստատության անունով: Իրանը գտնվում է Թուրքիայի և Ադրբեջանի հարեանույթամբ, այդ իսկ պատճառով մեզ համար բավականին դժվար է իրականացնել մեր աշխատանքները: Դժվարություններից մեկը նաև այն իրողությունն է, որ այսօր Իրանում ապրում են ավելի քան 20 մլն թրքախոս ազերիներ: Իրանում Հայ Դատի քարոզչական աշխատանքներ իրականացնելիս բնականաբար չի անտեսվում դարաբաղյան հիմնահարցը: Երբ մենք ցեղասպանության և Թուրքիայի հետ խնդիրների մասին բարձրաձայնում ենք, Իրանի ազերիների կողմից անմիջապես բարձրացվում է դարաբաղյան հարցը այլ կոնտեքստում՝ նշելով հոջալուի դեպքերը, և հանրությանը աղավաղված ներկայացնելով իրականությունը: Բարեբախտաբար վերջին տարիներին

Իրանի քաղաքական դաշտը մեզ համար մի քիչ բացվել է, քանի որ Իրանի հարաբերությունները լարված են թե Ադրբեջանի և թե Թուրքիայի հետ, և մենք կարողանում ենք ավելի ազատ աշխատանքներ տանել: Մեկ տարի է, որ «Ալիք» օրաթերթն արդեն տպում է պարսկերեն էջեր, որի միջոցով էլ կարողանում ենք մեր քարոզչությունն իրականացնել: Այդ էջերում անդրադառնում են ազատորեն արտահայտվում ենք Հայ Դատի, Ցեղասպանության, Դարաբաղյան հիմնահարցի շուրջ: Թեհրանի Հայ Դատի գրասենյակն աշխատում է տարբեր ուղղություններով. ունենք

Հայ Դատի կայքէջ թե հայերեն, թե պարսկերեն լեզուներով, ֆեյսբուքյան էջ, որոնց միջոցով կարողանում ենք քարոզչություն տանել: Պարսկական լրատվամիջոցները հաճախ օգտվում են մեր լրատվությունից՝ արտատպելով դրանք:

**- Վերջերս նկատվում է Իրան-Արևմուտք մերձեցում: Ի՞նչ եք կարծում, ի՞նչ ազդեցություն կարող է դա ունենալ Հայ Դատի աշխատանքների, Դարաբաղյան հիմնահարցի վրա:**

- Իրանի քաղաքականությունն անկանխատեսելի է, պահի հետ է կապված: Օրինակ Եվրամիության արտաքին հարաբերությունների և անվտանգության քաղաքականության հարցերով գերագույն հանձնակատար Զեթին Էշթանի Իրան այցելությունը, Իսպահանի հայկական եկեղեցի գնալը, Իսպահանի Հայոց Ցեղասպանության թանգարան այցելությունը, մեծ բողոքի ակտիվացումը Իրանի ազերիների կողմից, սակայն կարծում եմ՝ սա նշան է, որը ցույց է տալիս, որ Իրանը մեր կողքին է:

**- Իրանում բավական երկար տարիներ ունենք կայացած համայնք, որ հաստատվել է այնտեղ ցեղասպանության արդյունքում և նախքան ցեղասպանությունը՝ պատմական այլ իրադարձություններից ելնելով, սակայն առ այսօր Իրանը չի ընդունել ցեղասպանությունը: Ի՞նչ եք կարծում, ո՞րն է դրա պատճառը:**

- Բնականաբար, դրա պատճառներից մեկը ազերիների գործունեությունն է: Նույնիսկ երկրի ղեկավարն ազերի է, կառավարական կարեւոր պաշտոններ են զբաղեցնում ազերիները, սակայն չեն կարծում, որ հիմնական պատճառը դա է. ավելի որոշիչ դեր է խաղում կրոնական հարցը:

Նորից պիտի նշեմ, որ հարմար պահից է կախված Ցեղասպանության ընդունումը: Անցյալ տարի ապրիլի 24-ին ցեղասպանությանը նվիրված միջոցառում ենք կազմակերպել պարսիկ պատգամավորների և քաղաքական գործիչների համար, որտեղ Իրանի խորհրդարանի փոխնախագահը իր ելույթում երեք անգամ օգտագործեց Ցեղասպանություն բառը՝ նշելով, որ Թուրքիան իրագործել է Ցեղասպանություն հայերի նկատմամբ: Նոր նախագահի օգնականներից մեկը, որն զբաղվում է Իրանում փոքրամասնությունների հարցերով, վերջերս իր ելույթում նշել է, որ Թուրքիան այսօր Սիրիայում իրականացնում է նույն ցեղասպանությունը, ինչ 100 տարի առաջ իրագործել է հայերի դեմ:

**- Նոր նախագահ ընտրվելուց հետո ի՞նչ է փոխվել մասնավորապես հայերի համար: Փոխվել է արդյոք վերաբերմունքը հայերի նկատմամբ՝ քաղաքական դաշտում:**

- Նոր նախագահը կառավարության ամբողջ տեղեկագրով բաժին, որն ուղղակի զբաղվում է կրոնական, ազգային փոքրամասնությունների հարցերով: Դա նշանակում է, որ ինչ որ բան փոխվում է: Պարսկական մի քանի թերթերում շաբաթական մեկ էջ հատկացնում են հայերին, որտեղ խոսվում է հայերի պատմության, անցյալի մասին: Ամբիջական շփում կա կառավարության և հայկական համայնքի միջև. այցելում են մեր սրահներ, մասնակցում են մեր միջոցառումներին, այսինքն՝ վերջին 8 ամիսների ընթացքում ակնհայտ են այս բարեփոխումները:

Հարցազրույցը՝ Արմինե ՆԱՐԻՆՅԱՆԻ

## Չենք մոռանա, չենք ների

Ապրիլի 2-ին լրացավ Արցախյան շարժման առաջամարտիկ, Շուշիի առանձնակի գումարտակի անդամ, ՀՀ Դաշնակցության անդամ, ՀՀ Կոտայքի մարզի Պռոշյան գյուղի գյուղապետ Հրաչ Մուրադյանի սպանության մեկ տարին: Այդ առթիվ հայրենի Պռոշյանի պանթեոնում հավաքվել էին հարյուրավոր մարդիկ՝ Հրաչի մարտական ու կուսակցական ընկերներ, հարազատներ, համագյուղացիներ և, առհասարակ, բոլոր նրանք, ովքեր ճանաչել ու հիշում են Հրաչ Մուրադյանին:

Ներկաները հանդես եկան «Չենք մոռանա, չենք ների», «Պահանջում ենք բացահայտում», «Գտեք պատվիրատուներին» կոչերով ու պաստառներով:

Հերոս հայորդու հիշատակը խնկարկելուց հետո ելույթներով հանդես եկան նրա մարտական, կուսակցական ընկերները՝ շեշտելով, որ հավաքվել են ոչ թե սգալու, այլ արդար դատ պահանջելու, քանզի առ օրս Հրաչին զարկող նենգամիտները շարունակում են քայլել ու մնալ անպատիժ:

Հրաչ Մուրադյանն այն առաջամարտիկներից էր, ով Արցախյան շարժման առաջին իսկ օրերից նետվեց մարտադաշտ: Նրա մարտական փառավոր ուղին ձգվել է Շահումյանից մինչև Ֆիզուլի՝ իր կողքին ունենալով այնպիսի նվիրյալ ընկերների, ինչպիսիք էին նույն գյուղի արժանավոր զավակներ, լեգենդ դարձած Պետրոս Դեռնոյանն ու Կարոտ Մկրտչյանը: Պատերազմը խնայեց Հրաչին, սակայն ով կմտածեր, որ խաղաղ հայրենիքում ապրող դավադիր հայը կհամարձակվեր խլել նրա նմանի կյանքը:

Ելույթով հանդես եկավ ՀՀԴ ԳՄ անդամ, ՀՀ ԱԺ պատգամավոր Արմեն Ռուստամյանը. «Ժամանակը ավելի ակներև դարձրեց կորստի մեծությունը, մեր վիշտը գնալով բազմապատկվեց, որովհետև Հրաչին ուղղված գնդակն ուղղված էր մեր

ագգային ողնաշարին»,- շեշտեց Ա. Ռուստամյանը: «Մեկ տարի է անցել, սակայն կատարողները ազատության մեջ են: Մենք մի տարվա ընթացքում փորձեցինք ՀՀ իշխանություններին մղել այն գիտակցությանը, որ սա պարզ հանցագործություն է, որ սա լոկ անձին ուղղված հան-



ցավոր արարք է, սա Հրաչ Մուրադյան տեսակին ուղղված, Հրաչի նման մարդուն հրապարակից հանելու ոճրագործություն է, որը հարված է մեր պետությանը, մեր ապագային: Դժբախտաբար, այս գիտակցությունը չկարողացանք հաղորդել մեր իշխանություններին: Հարց է առաջանում՝ ուրեմն այս իշխանությունները կամ չեն ուզում, կամ չեն կարող: Երկու դեպքում էլ լուծումը մեկն է՝ պետք է հեռանան, և գան այն իշխանությունները, ովքեր կարող

են լուծել նման հարցեր»,- ավելացրեց Ա. Ռուստամյանը:

Ելույթ ունեցավ նաև Հրաչ Մուրադյանի մարտական և կուսակցական ընկեր Տարոն Տոնոյանը, ով իր ելույթում նշեց հետևյալը. «Մեկ տարի առաջ այս օրը գնդակ արձակվեց մեր պետականության, մեր անկախության, մեր ազնվության, մեր ազնվության, մեր ազնվության, մեր ազնվության, մեր բարձրագույն արժեքների վրա, որովհետև այդ արժեքներն իր մեջ կրում, պայքարով առաջ էր տանում Հրաչ Մուրադյանը: Մեր կսկիծը խորն է ու ցատում մեծ, որովհետև մինչև հիմա բացահայտված չէ այն դավաճան ձեռքը, որ դավադրեց այս ոճիրը»: Ապա Տ. Տոնոյանը շեշտեց. «Հրաչը մեր մեջ կապրի երկար, նրա գործերն են խոսում այդ մասին: Նրա անցած ուղին, նրա նվիրաբերումը հայրենիքին նրա կենդանի հուշարձանն են: Հրաչ Մուրադյանի ընտանիքը մենակ չէ, մենք միասին կանգնած ենք լինելու այնքան ժամանակ, քանի դեռ բացահայտված չեն դավադիրները: Մեր ընթացքը կանգնեցնել չի լինի, անհատներով չէ պայմանավորված մեր ընթացքը, մեր ընթացքը գաղափարի ընթացք է»:

Ներկաներին ուղղված խոսքով հանդես եկավ նաև Հրաչի մարտական, կուսակցական ընկեր Հարմիկ Հովսեփյանը, ով

սթափության կոչ արեց ու հորդորեց ոչ թե սգալ, այլ զինվել հաստատակամությամբ և արդար դատաստանի պահանջով, պայքարել հանուն արդարության վերականգնման:

Այնուհետև միջոցառումն ունեցավ իր անսպասելի շարունակությունը: Սիրելի ընկերոջն ու գյուղապետին հիշելուց և պատվելուց հետո պռոշյանցիները փակեցին Երեւան-Աշտարակ ճանապարհը՝ պահանջելով, որ ՀՀ ոստիկանապետն ու գլխավոր դատախազը ներկայանան և բացատրություն տան պռոշյանցիներին, թե ինչու մեկ տարվա մեջ ոչ մի բացահայտում չի կատարվել Հրաչի սպանության գործում:

Երկար սպասումներից հետո ներկայացավ Ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչության պետ Արամ Չաքարյանը, ով հարցի վերաբերյալ որեւէ իմաստալից բացատրություն չտվեց ներկաներին՝ հորդորելով, որ ցրվեն: Սակայն պռոշյանցիներն անկոտրում էին. նրանք բարձր կոչերով շարունակեցին հիշեցնել իրենց պահանջը և չբացեցին ճանապարհը:

Ճանապարհը բացվեց միայն այն ժամանակ, երբ ներկայացավ Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալ Հրաչյա Բաղայանը և խոստացավ, որ երկուշաբթի կամ երեքշաբթի ՀՀ ոստիկանապետն ու գլխավոր դատախազը կայցելեն Պռոշյան և կհանդիպեն գյուղացիներին...

Մի առիթով Հրաչ Մուրադյանն ասել էր. «Փոքր ազգ լինելու հանգամանքը մեզ ավելի պիտի պարտադրի հայրենասեր, ազգասեր ու միասնական լինելը»: Երանի այն հային, ով իր մեջ ազնվորեն կրում է այս գաղափարը, կարողանում է վստահաբար քայլել հայրենի հողի վրա և բաց ճակատով նայել Արարատին:

Հերմինե ԱՎԱԳՅԱՆ

### Մի հայտնի անհայտի պատմություն

Անցյալը, որպես կանոն, շատ հաճախ ներկայ է թելադրում, ու անցյալի առանձին խորհրդանշական կերպարներ իրենց աներկայից ներկայությունը ոչ միայն կամրջում են անցյալի ու ներկայի, այլև ուղենշում ճշմարիտ ապագան:

Մեր պատմության առանձին դրվագներում քիչ է ասել այն անհատները, ովքեր առ այսօր մնացել են չներկայացված ու չընթերցված: Նրանցից մեկն էլ Ալեքսանդր Բալասայանն է, ում կերպարի հետ հիմա առերեսվում ենք՝ գիտակցելով անցյալի ճշմարիտ կերպարների ներգործության ուժը: Աշխարհաքաղաքական զարգացումների մեր օրերում այսպիսի կերպարների օգնությամբ, որոնք կազմում են մեր ազգային ուղենշային համակարգի մասը, մենք կատարում ենք հիշողության վերարտադրումներ՝ իրերի ազգային ընդհանրության ու ինքնության յուրատիպ դրսևորումներ:

Ալեքսանդր Կարապետի Բալասայան: Խիզախ ֆիդայու է հավատավոր դաշնակցական կյանքի ու շարժում պատմությունը քաջության դաս է, որ պատվելով մեր հոգեւոր ու գաղափարախոսական առանցքի շուրջը, մեր մտքի կենդանի մատյանը մի էջով էլ է հարստացնում: Ալեքսանդր Բալասայանը ծնվել է 1870 թվականին (ունեցել է երկրորդ անձնագիրը, բայց որի՝ ծնվել է 1863 թվականին Արցախի Այգեստան (Բալուշա) գյուղում): Սկզբնական կրթությունը ստացել է հոր՝ մանկավարժ Կարապետ Բալասայանի մոտ: 1893 թվականին, մեկնելով Բաքու, Ալեքսանդրը աշխատել է Մանթաշովի՝ նավթահանքերում՝ որպես գիշերային «հրահանգիչ»: Այս տարիներին արդեն իսկ ընդգծվել է հայրենասեր քաջորդու կազմակերպչական ու ազգայնորդ գործունեությունը: Աշխատելով հայ բանվորների շրջանում՝ նա փորձում էր համախմբել նրանց և ներգրավել տեղի ազատագրական շարժումների մեջ: Բնականաբար, այս գործողությունները անկարող էին մնալ Բաքվի ոստիկանական ուժերի տեսողաշ-

տից, սակայն նրանք չեն կարողանում ձերբակալել, իրենց իսկ բնորոշմամբ, «Յայ գաղտնի ընկերության» ներկայացուցիչ: Վերջինս 1896 թվականին Կամավոր ջոկատի հետ հայտնվում է Արեւմտյան Հայաստանում: Այստեղ նա, որպես ֆիդայի, մասնակցել է հայ գյուղացիների պաշտպանության համար սկսվող մի շարք կռիվների և մեծ հեղինակություն ունենալով ֆիդայիների շրջանում: Վերադառնալով հայրենի Արցախ՝ նա անընդատ փոխում էր իր ապրելու տեղը: Հիմնականում բնակվում է Շուշիում, այնուհետև մեկնում էր Երեւան ու Թիֆլիս, քանի որ գտնվում էր ոստիկանների կասկածանքների ու որոնումների մեջ: Չնայած ցարական ուժերի կողմից այսպիսի վերահսկողությանը՝ նրա հարազատ գյուղացիները անընդհատ նրա հետ էին ու ամեն կերպ փորձում էին զգուշացնել վտանգի ու դավադրության մասին: Նույնիսկ հարազատ գյուղի քյոլիվա Համբարձում Ամիրխանյանին ստիպում են մատնել Ալեքսանդրին, սակայն նա անդրդվել էր, ինչի համար խոշտանգումների է ենթարկվում կազմակերպիչ կողմից: Հերթական անգամ գյուղ գալով և իմանալով, որ իրեն ուզում են ձերբակալել, հպարտ ու խիզախ հայորդին հրաժարվում է թաքնվել կամ փախուստի դիմել: 1912 թվականին նա ձերբակալվում է, դատապարտվում ցմահ ազատազրկման ու արտաքսվում Սիբիր: Սակայն սկսվում է Առաջին համաշխարհային պատերազմը, և ցարական ուժերը չեն կարող Ալեքսանդրի նման ռազմիկի ու քաջ զինվորականի ուժը չօգտագործել թուրքերի դեմ: Նրան ներում են շնորհում, ինչից հետո նա ռուսական բանակի կազմում հայտնվում է Արեւմտյան Հայաստանի տարբեր ռազմաճակատներում, բազմաթիվ սխրանքներ գործում և արժանանում Գեորգիեյան խաչի: 1917 թվականին ռուսական զորքը հեռանում է Արեւմտյան Հայաստանից, բայց հայ քաջորդու կռիվը թուրք սապատակչի դեմ չի վերջանում:

1918 թվականին, վերադառնալով հայրենի գյուղ, նա մասնակցում է թուրքերի դեմ ռազմական գործողություններին. թուրքերն արդեն Մարտակերտի շրջանի երեք գյուղ էին գրավել: Շրջակա գյուղերից հայկական ջոկատ կազմելով՝ Ալեքսանդրը հարձակվում է թուրքական հսկա ուժերի վրա և ազատագրում հայկական գյուղերը: Նրա կենսագրության հաջորդ կարեւոր սխրանքը կատարվում է 1918 թվականին, երբ թուրքերը Աղղամում բանտարկում են 512 հայի: Այս գույքը իմանալով՝ Ալեքսանդրն անմիջապես հավաքում է իր ջոկատը և Ասկերանի ճանապարհին պատանդ վերցնում 600 թուրքի և, պատգամավոր ուղարկելով Աղղամ (Ալկնա), պահանջում է փոխանակում կատարել՝ պատանդ հայերին հասցնել սահման և թուրքերի հետ փոխանակել: Նույն թվականին Ստեփանակերտի մոտակայքում թուրքական կառնավոր բանակի հետ 150 մարտիկներով Ալեքսանդր Բալասայանը կռվի է մտնում և վիրավորվում: Ալեքսանդրը նաեւ իր անուրանալի մասնակցությունն է ունեցել Սարդարապատի ճակատամարտին՝ երկու քեռիների հետ (Պավել և Դանիել Բեկ-Փիրումյանները եղել են Ալեքսանդրի քեռիները Արցախի Նախիջեանիկ գյուղից):

1920 թվականին Արցախ է ժամանում ռուս գնդապետ Չախարովը, որին Ալեքսանդրն օգնում է մարտական ջոկատներ կազմավորելու: Նախատեսվում է հարձակում գործել թուրքերի վրա մի քանի ջոկատներով: Չնայած Ալեքսանդրին վստահված էր ամենապատասխանատու դիրքը՝ նա իր հմտության և ռազմիկ բարձր մարտավարության շնորհիվ առանց կրակոցի ոչնչացնում է թուրք ժամապահներին, գերում թուրք ասկյարներին, վերցնում նրանց զենքն ու զինամթերքը: Նրա այս քաջագործություններն ավելի են կատաղեցնում Շուշիում գտնվող թուրքական հրամանատար Սուլթան Բեյին, ով մեծ գումար էր խոստացել Ալեքսանդրի գլխի համար: Եվ

ահա հաջորդ օրը, երբ նա իր սպիտակ ձիով անցնում էր Ստեփանակերտի փողոցներով, Ալեքսանդրից մեկից դավադրաբար կրակ են բացում Ալեքսանդրի վրա: Ընկերները կարողանում են նրան հասցնել Կարկառ գետի ափը, որտեղ էլ նա կնքում է իր մահկանացուն:

Հայ ժողովրդի հերոսական ու ողբերգական պատմությունն ամբողջական շղթա է, և եթե Ալեքսանդրն իր հերոսական դերակատարությունն ունեցել է հայոց պատմության բախտորոշ ժամանակաշրջանում, ապա նրա սերունդներն անմասն չեն մնացել դրանից, և մեր պատմության մյուս ճակատագրական պահին՝ Արցախյան ազատամարտում իրենց մեծ ավանդն են ունեցել: Նրա որդիներից Ռոբերտը և Ռազմիկը Արցախյան շարժման դեռ սկզբնական փուլում էլ հասկանում էին, որ խաղաղ ճակատագրով այս հարցը լուծում չի կարող ունենալ և միայն միասնական կամքով ու զենքով պիտի խոսել թուրքերի հետ: Այս հեռահար նպատակներով՝ դեռ 1988 թվականին, հմտանալով զինագործական արհեստի մեջ, նռնակ, հրացան ու հրթիռներ զենքեր են պատրաստում և ուղարկում Արցախ:

Հիրավի, այսպիսի կերպարների միջոցով ոչ միայն վերանորոգվում է մեր հիշողությունը, այլև սուղցվում ազգային ինքնագիտակցության երակն ու սիրտը: Այսպես ու այսպիսի կերպարների կենսագրությունը մերը դարձնելով է միայն, որ կարող ենք ընդարձակել մեր ազգային ինքնության ու ինքնագիտակցության սահմանները: Ալեքսանդրի նմանները գալիս և լրացնում են այն հերոսական ոգի ունեցողների շարքը, որոնցով մեր քայլերն առավել հաստատուն են լինում...

Խոնարիվենք ու փառք ասենք հայրենիքի ու բարձր գաղափարների զինվորայիներին...

Սիրանուշ ՍԱՐԳՅԱՆ

Հանցվածքագրություն

ՄԻՋԱՆԱԿ՝ ՄԵՏ Ինքնի առցայտ ազատազրկման և բարեկարգության հիմնադրամի 2013թ. գործունեության ծանուցիչ:

Հիմնադրամի ստեղծվել է 03.05.2005թ. (ՎՊ.ՆՁ.001416)

Գրանցման համար՝ 443.160.10941  
ՀՊՀԿ՝ 30882132

Հիմնադրամը ստեղծվել է բարեկարգությունը 2013թ. ընդունելով կապիտալ 10.740 հազ. դրամ:

Ֆինանսավարման ազգային գործակալության կողմից ստեղծվել է 2013թ. մարտի 16-ին կապիտալ 266 օգտվող կազմադրված խորհրդի անդամները:

Ընդհանուր կապիտալի ցուցանիշները:

Համաձայն Գ. Բարսեղյանի  
Համաձայն Բ. Գաբրիելյանի  
Համաձայն Ն. Բարսեղյանի  
Համաձայն Զ. Չիրակոսյանի  
սյգու արեք.  
աշխարհից

Հանցվածքագրության հանցվածքագրություն

Հանցվածքագրության հանցվածքագրություն	Հանցվածքագրության հանցվածքագրություն
Գրանցման համար՝ 443.160.10941	Հանցվածքագրության հանցվածքագրություն
ՀՊՀԿ՝ 30882132	Հանցվածքագրության հանցվածքագրություն

Հանցվածքագրության հանցվածքագրություն

Հանցվածքագրության հանցվածքագրություն	Հանցվածքագրության հանցվածքագրություն	Հանցվածքագրության հանցվածքագրություն
Հանցվածքագրության հանցվածքագրություն	Հանցվածքագրության հանցվածքագրություն	Հանցվածքագրության հանցվածքագրություն
Հանցվածքագրության հանցվածքագրություն	Հանցվածքագրության հանցվածքագրություն	Հանցվածքագրության հանցվածքագրություն

Հանցվածքագրության հանցվածքագրություն

Հանցվածքագրության հանցվածքագրություն

Հանցվածքագրության հանցվածքագրություն

### Աֆորիզմներ

- Ազնիվ մարդու համար տրված խոստումը կատարել է բարոյական չափանիշ է: \*\*\*
- Բառերը և մտքերը ոչինչ են, եթե չկա մտածված գործողություն: \*\*\*
- Իզուր վատնված տաղանդը կարող է կյանքում ամենացավալի կորուստը լինել: \*\*\*
- Համբերությունն ընդունելի է այն ժամանակ, երբ համագործակցում է քրտնաշան աշխատանքի հետ: \*\*\*
- Մարդուն ճիշտ ճանապարհից շատ բան կարող է շեղել: Դրանցից ամենավտանգավորը իրականության ճշմարիտ զգացողությունը, պատկերացումը կորցնելն է: \*\*\*
- Գոյության պայքարի անհրաժեշտությունը բնությունն է մարդուն թելադրում: \*\*\*
- Երբ մարդու խիղճը մաքուր է, նրա միտքն ու գործողությունները տատանումների են ենթակա: \*\*\*
- Թեթևամտության հետևանքը երբեմն շատ ծանր է լինում: \*\*\*
- Ընկերոջ սխալները քողարկելը նրան ոչ թե փրկել, այլ կործանումը հետաձգել է նշանակում: \*\*\*
- Ցանկացած գործողություն արժեւորվում է ստեղծած արդյունքով: \*\*\*

- Հավատարիմ ընկերը ավելի հուսալի է, քան անսիրտ ազգականը: \*\*\*
- Շատ կարողացող է զգում, որ սովորելու շատ բան կա: \*\*\*
- Մեծ հաղթանակների ճանապարհին մեծ նահանջներ էլ են լինում: \*\*\*
- Գոյության պայքարում որքան էլ դժվար լինի, հավասարակշռություն պահելը կարեւոր է: \*\*\*
- Չպետք է նեղանալ այն մարդուց, ով օգնելու հնարավորություն ունի, բայց չի օգնում: Նեղանալ պետք է այն մարդուց, ով չպետք է վատություն անի, բայց անում է: \*\*\*

Դավիդ ԳԵՎՈՐԳՅԱՆ

### Ցավակցական

ՀՀ Կրցախի Կենտրոնական կոմիտեն Արցախի կառույցի անունից իր ցավակցությունն ու զորակցությունն է հայտնում ՀՀ Կրցախի Կենտրոնական կոմիտեի «Մ. Մոսիյան» կոմիտեի պատմության անդամ Մասիս Սուլեյմանյանին և նրա ընտանիքին՝ մոր՝ Ռիմա Գալստյանի մահվան կապակցությամբ: